# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 02

**«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 31.03.2016թ.-ի N 28-Լ հրամանով կազմավորված գնահատող հանձնաժողովի նիստի**

ք.Երևան 12.04.2016թ. ժամը $12^{00}$

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ 31.03.2016թ-ի N 28- Լ հրամանի հիման վրա տրանսֆորմատորային յուղի վերլուծության ծառայության պարզեցված ընթացակարգով ձեռքբերում, ծածկագիր՝ «ԲԷՑ–ՊԸԾՁԲ-16/11»

Մասնակցում էին հանձնաժողովի՝

նախագահ՝

Ս. Իգիտբաշյան - գլխավոր ճարտարագետ

անդամներ՝

Լ. Ջավադյան - գլխավոր տնօրենի խորհրդական

Լ. Ադամյան - գլխավոր ճարտարագետի տեղակալ

Վ. Մարտիրոսյան - ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ

Մ. Բաղրամյան - իրավապայմանագրային բաժնի պետ

Քարտուղար՝

Ռ.Ալբերտյան - գնումների համակարգող

## I. Հայտի բացման մասին

--------------------------------------------------------------------------------

(Ս. Իգիտբաշյան)

1. Ընդունել ի գիտություն, որ.

ա) սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

- «Էներգակարգաբերում» ՓԲԸ-ն ՝ 12.04.2016թ, ժամը 10:30-ին, իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Այգեձորի փ. 67. , հեռ. 22-21-55

2. Ընթացակարգի հրավերով սահմանված ծրարի կազմման և ներկայացման պահանջներին համապատասխանում է մասնակցի կողմից ներկայացրած հայտը:

2.1 Մասնակցի ծրարում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

2.3 Մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին:

2.4 «Էներգանորոգում» ՓԲԸ –ի գնային առաջարկն է 16 217 730 դրամ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա/ Գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Էներգանորոգում» ՓԲԸ –ին 16 217 730 դրամ գնային առաջարկով:

բ/ Հարցում ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն 1-ին տեղը

զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 2.3 կետի «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշներին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

գ/ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

դ/ Հաջորդ նիստը գումարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից եզրակացությունը ստանալու օրվա հաջորդ աշխատանքային օրվա ժամը 14:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Ս. Իգիտբաշյան

Լ. Ջավադյան

Լ. Ադամյան

Վ. Մարտիրոսյան

Մ. Բաղրամյան

Ռ.Ալբերտյան